ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 30-ի հ.402-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Կենտրոն վարչական շրջանի, Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/2 հասցեում գտնվող 1.5509հա մակերեսով հողամասը՝ «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր մարզաբազայի կառուցման նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել Կենտրոն վարչական շրջանի, Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/2 հասցեում գտնվող 15509քմ մակերեսով հողամասը՝ «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր մարզաբազայի կառուցման նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 30-ի հ.402-Ա որոշմամբ նախատեսվել է որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել «Հրազդան մարզահամալիր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի, Հրազդանի կիրճ հ.4 հասցեում գտնվող՝ 39525քմ (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.03.2007թ. հ.2242732 վկայական) հողամասից՝ 15509քմ հողամասը ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի՝ Երևան համայնքին նվիրաբերելու, «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր մարզաբազայի կառուցման նպատակով:

ՀՀ կառավարության 30.03.2023թ. հ.402-Ա որոշման շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքում 19.06.2023թ. կայացվել է Երևանի քաղաքապետի հ.1572-Ա որոշումը, որով Հրազդանի կիրճի հ.4 հասցեում գտնվող շինությունների փաստացի զբաղեցրած հողամասի սահմանները ճշտվել են 35681.36քմ մակերեսի չափով, այնուհետև բաժանվել՝ 1027.37քմ, 15509.0քմ և 19144.99քմ մակերեսով հատվածների: Քննարկվող հողամասերին տրամադրվել է համապատասխանաբար «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/1», «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/2» և «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/3» հասցեները, որոշման հիման վրա թողարկվել են գլխավոր հատակագծեր և որոշումից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 30.03.2023թ հ.402-Ա որոշման 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերը արդեն կատարված են, անհրաժեշտություն է առաջանում պետական գույքի կառավարման կոմիտեի հետ 15.509քմ մակերեսով գույքը հանձնել Երևան համայնքին և կնքել նվիրաբերության

պայմանագիր՝ Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/2 հասցեում նոր մարզաբազա հիմնելու նպատակով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (Նվիրատուն) մյուս կողմի (Նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրաբերություն է ճանաչվում Գույքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, որը կարող է արվել նաև համայնքներին: Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը իրավաբանական անձանց՝ պայմանավորված է այն որոշակի նշանակությամբ օգտագործելով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում՝ նվերն ընդունելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրաբերություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրաբերություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ